*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ*

*«ԿՈՆՏՌՈԼ ՍԹԱՐ »*
*ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ*

*REPUBLIC OF ARMENIA*

*«CONTROL STAR»*
*LIMITID LIABILITY COMPANY*

/Հայաստանի Աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ /ՀԿ խորհրդի 18.11.2022թ-ի Թիվ 42-Ա որոշմամբ ռեեստրում գրանցման ամսաթիվը՝ 18.11.2022թ, հիմնական գրանցման համարը Թիվ /1220728/

ՀՎՀՀ 01046204
ք. Երևան, Էմինեսկու 2փ . 10/2

# Անկախ աուդիտորի եզրակացություն

*«ՋԵՐՄՈՒԿ ԳՐՈՒՊ» ՓԲԸ* բաժնետերերին

## *Վերապահումով կարծիք*

Մենք աուդիտի ենք ենթարկել *«ՋԵՐՄՈՒԿ ԳՐՈՒՊ»* ՓԲԸ այսուհետ «Ընկերություն» ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են **2021թ**. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ Վերապահումով կարծիքի արտահայտման հիմք բաժնում նկարագրված հանգամանքի հնարավոր ազդեցությունից, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

## *Վերապահումով կարծիքի հիմք*

Մենք նշանակվել ենք ընկերության աուդիտոր 2022թ դեկտեմբերին 20-ին, ուստի հնարավորություն չենք ունեցել հետևելու պաշարների գույքագրման գործընթացին 2021թ-ի տարվա վերջում: Մենք անկարող էինք իրականացնել այլընտրանքային ընթացակարգեր, որպեսզի ինքներս համոզվեինք պաշարների առկայության և քանակի վերաբերյալ 2021թ-դեկտեմբերի 31-ի դրությամբ, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ ներառված են **3,518,877** հազ դրամ գումարով:

Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այս ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք ընկերությունից՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջներին համապատասխան համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների

խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի հանրապետությունում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները համաձայն այդ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Հանգամանքի շեշտադրում*

Ընկերության համադրելի տեղեկատվությունը՝ 2020թ-ի ֆինանսական հավետվությունները աուդիտ չեն ենթարկվել:

*Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը*

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի ընկերությունը լուծարելու կամ ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթուրումը, երբ այն առկա է: Խեղաթուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական , երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացված աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում կասկածամտություն: Ի լրումն մենք նաև՝

-Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք կհանդիսանան աուդիտորի կարծիք արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերելու ռիսկը ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

-Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

-Գնահատում ենք կիրառած հաշվապահական հաշվառման սկզբունքների տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների և կից **բացահայտումների** խելամտությունը:

-Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելը, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա գնահատում արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե աուդիտորը եզրահանգում է, որ առկա է էական անորոշություն, ապա պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, իսկ եթե այդ բացահայտումները բավարար չեն, ապա ձևափոխել կարծիքը: Աուդիտորի եզրահանգումները հիմնված են մինչև աուդիտորի եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը

-Երբ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են ճշմարիտ ներկայացման հիմունքի համաձայն, գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործառույթների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը

-ի լրումն այլ հարցերի կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցում ենք աուդիտորի առաջադրանքների պլանավորած շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի ներառյալ ներքին հսկողության վերաբերող նշանակալի թերությունները:

Տնօրեն, աուդիտի ղեկավար

Լուսինե Շահոյան

«ԿՈՆՏՐՈԼ ՍԹԱՐ» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան Էմինեսկու 2փ 10/2տ
2023թ. մարտի 1

# <<ՋԵՐՄՈՒԿ ԳՐՈՒՊ >> ՓԲԸ

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար. դրամ

| | Ծա-նոթ. | 2020թ | 2021թ |
|---|---|---|---|
| Ակտիվներ | | | |
| *Ոչ ընթացիկ ակտիվներ* | | | |
| Հիմնական միջոցներ | 4.1 | 12,007,310 | 17,813,544 |
| Ֆին վարձ, ստացվ. Յիմնական միջոցներ | 4.2 | 0 | 125,475 |
| Կենսաբանական ակտիվներ | | | |
| Ներդրումային գույք | | | |
| Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | | | |
| Ոչ նյութական ակտիվներ | 4.3 | 33,534 | 22,243 |
| Բաժնեմասնության մեթոդով հաշվառվող ներդրումներ | | | |
| Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | | | |
| Հետաձգված հարկային ակտիվներ | | | |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | | | 223,670 |
| ***Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ*** | | 12,040,844 | 18,184,932 |
| *Ընթացիկ ակտիվներ* | | | |
| Պաշարներ | 4.4 | 3,608,443 | 3,518,877 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 4.5 | 5,418,593 | 7,535,739 |
| Ընթացիկ հարկային ակտիվներ շահութահարկի գծով | | | |
| Ընթացիկ ֆինանսական ներդրումներ | | 78,909 | 57,649 |
| Մնացորդներ բանկերում և դրամարկղում | 4.6 | 1,555,060 | 4,488,888 |
| Այլ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | | | |
| Այլ ընթացիկ ակտիվներ | | 194 | 23,942 |
| ***Ընդամենը ընթացիկ ակտիվներ*** | | 10,661,199 | 15,625,095 |
| ***Ընդամենը ակտիվներ*** | | 22,702,043 | 33,810,027 |

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(շարունակություն)

Հազար դրամ

| | ծանոթ. | 2020թ | 2021թ |
|---|---|---|---|
| *Սեփական կապիտալ և պարտավորություններ* | | | |
| Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալ | 4.7 | 434 | 506 |
| Էմիսիոն եկամուտ | 4.7 | 1,230,927 | 2,024,356 |
| Վերագնահատման պահուստ | | | |
| Կուտակված շահույթ (վնաս) | | 2,835,082 | 3,478,663 |
| Պահուստային կապիտալ | | | |
| Սեփական կապիտալի այլ տարրեր | | | |
| ***Ընդամենը սեփական կապիտալ*** | | **4,066,443** | **5,503,525** |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Վարկեր և փոխառություններ | | | |
| Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ | 4.8 | | 123,498 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 4.9 | 127,173 | 299,428 |
| Այլ պարտավորություններ և ծախսումների գծով պահուստներ | | | |
| Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| ***Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ*** | | **127,173** | **422,926** |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Վարկեր և փոխառություններ | 4.10 | 11,829,777 | 12,909,920 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 4.11 | 6,562,899 | 14,822,711 |
| Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն | | | |
| Պահուստներ այլ պարտավորությունների և ծախսումների գծով | 4.12 | 115,751 | 150,945 |
| Այլ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ | | | |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | | **18,508,427** | **27,883,576** |
| ***Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ*** | | **22,702,043** | **33,810,027** |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝ 09.03.2022թ.

Գլխ.տնօրեն ՝ Վ. Պողոսյան Գլխավոր հաշվապահ՝ Կ. Թադևոսյան



# Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ

| | Ծան. ր. | 2020թ | 2021թ |
|---|---|---|---|
| Հասույթ | 4,13 | 9,151,794 | 13,224,738 |
| Վաճառքի ինքնարժեք | 4.14 | 5,477,155 | 7,105,074 |
| *Համախառն շահույթ(վնաս)* | | 3,674,639 | 6,119,664 |
| Այլ եկամուտներ | 4.15. | 336,827 | 190,117 |
| Իրացման ծախսեր | 4.16 | 1,874,515 | 2486987 |
| Վարչական ծախսեր | 4.16 | 649,192 | 669,018 |
| Այլ ծախսեր | 4.16 | 237,583 | 708,358 |
| *Գործառնական գործունեությունից շահույթ(վնաս)* | | 1,250,176 | 2,445,418 |
| Ֆինանսական ծախսեր | 4.17 | 1,432,034 | 1629582 |
| *Շահույթ(վնաս) մինչև հարկելը* | | (181,858) | 815,836 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 4.18 | 206,372 | 172,255 |
| *Տարվա շահույթ(վնաս)* | | (388,230) | 643,581 |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ | | | |
| *Ընդամենը համապարփակ արդյունք* | | (388,230) | 643,581 |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկած բազային շահույթ (վնաս) | | | |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկած նոսրացված շահույթ (վնաս) | | | |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝09.03.2022թ.

Գլխ.տնօրեն ՝ Վ. Պողոսյան Գլխավոր հաշվապահ՝ Կ. Թադևոսյան

# ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

| | Բաժնետիրական կապիտալ | Էմիսիոն եկամուտ | Վերագնահատումից պահուստներ | Պահուստային կապիտալ | Կուտակված շահույթ/(վնաս) | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| 2020թ. հունվարի 1-ի դրությամբ | 383 | 689,114 | | - | 3,223,312 | 3,912,809 |
| Մնացորդի ուղղում | | | | | | - |
| Տարվա շահույթ/(վնաս) | | - | | | (388,230) | (388,230) |
| **Բաժնետոմսի թողարկում** | 51 | 541,813 | | | | 541,864 |
| Ներքին շարժեր | | | | | | - |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ** | | | | | | - |
| Շահաբաժիններ | | | | | | - |
| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 434 | 1,230,927 | - | - | 2,835,082 | 4,066,443 |
| Մնացորդի ուղղում | | | | | | - |
| Տարվա շահույթ/(վնաս) | | - | | | 643,581 | 643,581 |
| **Բաժնետոմսի թողարկում** | 72 | 793,429 | | | | 793,501 |
| Ներքին շարժեր | | | | | | - |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ | | | | | | - |
| Շահաբաժիններ | | | | | | - |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 506 | 2,024,356 | - | - | 3,478,663 | 5,503,525 |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝09.03.2022թ.

Գլխ.տնօրեն ՝ Վ. Պողոսյան

Գլխավոր հաշվապահ՝ Կ. Թադևոսյան

# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ

| | 2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| **Գործառնական գործունեություն** | | |
| Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը | **275,737** | **1,555,060** |
| Իրացումից մուտքեր | 10,169,847 | 13,674,019 |
| Գործառնական այլ գործունեությունից մուտքեր | 3,592,301 | 10,228,271 |
| Նյութերի, ապրանքների ձեռք բերման գծով ելքեր | 5,698,609 | 9,493,973 |
| Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով | 3,275,743 | 6,729,571 |
| Վճարումներ աշխատակիցներին | 1,791,668 | 2,090,420 |
| Վճարումներ բյուջե | 1,129,593 | 1,365,797 |
| Վճարումներ շահութահարկի գծով | | |
| Վճարումներ սոցիալական ապահովագրության Հիմնադրամ | | |
| Վճարված տոկոսներ | | |
| այլ վճարումներ | 89,125 | 65,937 |
| Ընդամենը գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր | 11,984,738 | 19,745,698 |
| Ընդամենը գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | 7,476,019 | 13,650,565 |
| **Ներդրումային գործունեություն** | | |
| Ներդրումային այլ գործունեությունից դրամական միջոցների մուտքեր | 838,334 | 165,421 |
| Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից մուտքեր | 21,316 | |
| Շահաբաժինների և տոկոսների ստացումից | 4,558 | 106,272 |
| Ընդամենը ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր | 864,208 | 271,693 |
| Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումից ելքեր | 90,492 | 320,719 |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների այլ ելքեր | 373,280 | 10,895 |
| Ընդամենը ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր | 463,772 | 331,614 |
| Ընդամենը ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | 400,436 | - 59,921 |
| **Ֆինանսական գործունեություն** | | |
| Ստացված վարկերից և փոխառություններից մուտքեր | 1,249,023 | 153,118 |
| Ֆինանսական գործունեությունից այլ մուտքեր | | |
| Ընդամենը ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր | 1,249,023 | 153,118 |
| Ստացված վարկերի և փոխառությունների մարումից ելքեր | 2,156,502 | 1,316,422 |
| Ընդամենը ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր | 2,156,502 | 1,316,422 |
| Ընդամենը ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | - 907,479 | - 1,163,304 |
| Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր | 6,968,976 | 12,427,340 |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ | 8,956 | 461 |
| Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին | **1,555,060** | **4,488,888** |

Տնօրեն

Գլխ. հաշվապահ